ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ Կ-28-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆՍՏԱՎԱՅՐ ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԱՅՑԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նստավայր (այսուհետ՝ Ազգային ժողով) ճանաչողական այցերի (այսուհետ՝ այցեր) կազմակերպման, անցկացման եւ այցերի ծրագրի կազմման կարգն ու պայմանները:

1.2. Այցեր կազմակերպվում են Ազգային ժողովի գործունեության հրապարակայնության եւ Ազգային ժողովի նստավայրի (վարչական շենքի)՝ որպես Երեւան քաղաքի պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանի ճանաչողական նպատակով հանրությանը հասանելիությունն ապահովելու համար:

2. ԱՅՑԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

2.1. Այցեր կարող են կազմակերպվել, որպես կանոն, ուսումնական հաստատությունների սովորողների (ուսանողների) եւ այլ կազմակերպությունների կոլեկտիվների համար՝ համապատասխան կազմակերպությունների ղեկավարների ներկայացրած գրավոր հայտերի հիման վրա:

2.2. Հայտերը ներկայացվում են Ազգային ժողովի նախագահի անունով այցի՝ հայտատուի կողմից նախատեսվող օրվանից առնվազն մեկ ամիս առաջ եւ ներառում են տեղեկություններ այցի նպատակի եւ մոտավոր ժամկետի վերաբերյալ:

2.3.Հայտին պարտադիր կցվում է այցելուների ընդհանուր ցուցակը՝ նրանց անհատական տվյալների (անուն, ազգանուն, ծննդյան ամսաթիվ, ամիս, տարի) եւ այցելուների խմբի ղեկավարի, ինչպես նաեւ հետադարձ կապի հեռախոսահամարի, էլեկտրոնային փոստի հասցեի նշումով:

2.4. Հայտի հիման վրա այցի կազմակերպման համաձայնությունը տալիս է Ազգային ժողովի նախագահը՝ ելնելով Ազգային ժողովի եւ աշխատակազմի ընթացիկ աշխատանքային ծանրաբեռնվածությունից:

2.5. Այցերը կարող են տեւել ոչ ավել, քան երկու ժամ:

2.6.Այցելուներն Ազգային ժողովի տարածք մուտք են գործում Բաղրամյան պողոտայի անցագրային կետով՝ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի վավերացրած ընդհանուր ցուցակի ներկայացմամբ:

2.7. Այցերի կազմակերպման եւ անցկացման նախապատրաստական աշխատանքներն իրականացնում է Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի որոշած Ազգային ժողովի աշխատակազմի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը:

2.8. Այցի համաձայնեցված օրը եւ ժամին այցելուի չներկայանալու դեպքում այցի հայտը նրա մասով համարվում է մերժված:

3. ԱՅՑԻ ԾՐԱԳԻՐԸ

3.1.Յուրաքանչյուր այց կազմակերպվում եւ անցկացվում է Ազգային ժողովի աշխատակազմի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման կողմից մշակված եւ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի հետ համաձայնեցված այցի ծրագրին համապատասխան՝ հայտում նշված նպատակի հաշվառմամբ:

3.2. Այցի ծրագիրը ներառում է նաեւ այցի օրը եւ ժամը, այցելուներին տրամադրվող հիմնական ճանաչողական տեղեկությունների համառոտ նկարագրությունը եւ հրահանգավորումը Ազգային ժողովի նստավայրի տարածքում եւ շենքում գործող անվտանգության կանոնների վերաբերյալ:

3.3. Համաձայնեցված այցի օրվա, ժամի եւ ծրագրի բովանդակության մասին Ազգային ժողովի աշխատակազմի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը այցելուների խմբի ղեկավարին տեղեկացնում է այցի օրվանից առնվազն յոթ օր առաջ: